ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ ՏՈՀՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐ

Ա. Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

XVIII դարի հայ գեղանկարչական արվեստն իր ճանաչումն է գտել շնորհիվ Հովնաթանյան տոհմի նկարիչների, որոնց նախահայրը համարվում է Նաղաշ Հովնաթանը (1661—1722)։ 1682 թ. Փլավիոս Եվսեբիոսի «Վասն հրեական պատերազմին» երկի բնագրի իր ընդօրինակության հիշատակարանում նա գրում է. «Գրեցաւ զսա ձեռամբ Յովնաթան դպրի ի դէղղէն Շոռոթոյ եւ հայրն իմ ըզտէր Յոհանն՝ հանգուցեալն ի Քրիստոս...»[1]։ Ներսես Ակինյանը այս «տէր Յոհան»-ին նույնացրել է XVII դարի ոմն Հովհաննես վարդապետի հետ, որն ապրել է Շոռոթում և ձեռագրեր է նկարազարդել։ Այդ մասին նա գրում է. «Եթե սխալման մեջ չենք գտնվիր, հաջողած է մեզի երևան հանել նաև տեր Հովհաննեսի անձնավորությունն և յուր նախնյաց տոհմագրությունն ընդարձակ գծերով»[2]։ Այստեղ Ակինյանը մեջբերում է կատարում 1631 թ. Շոռոթում Հովհաննես վարդապետի ընդօրինակած «Լուծմունք Դաւիթ Անյաղթի և Յովհ. Որոտնեցւոյ եւ Գր. Տաթեւացւոյ» մատյանի հիշատակարանից, որտեղ ասվում է. «Ես, նուաստ եւ յետին ի բանասէրս՝ Յովհաննէս, անուամբ եւեթ կոչեցեալ վարդապետ, որդի տեր Վարդան քահանայի, որ զՍբ. Աստուածածնի Անապատս շինեաց ի գեղաքաղաքս Շոռոթ, եւ ժողովեաց բազում կուսան կրօնաւորս եւ հաստատեաց եւ լցոյց ամենայն շինութեամբ եւ բարութեամբ անպակաս, հոգեւորօք եւ մարմնաւորօք եւ ինքն փոխեցաւ առ լոյսն բնաւից ի տենչալին իւր»[3]։

Հետագա ուսումնասիրողները հիմք ընդունելով Ակինյանի այս մեկնությունները, որպես Նաղաշ Հովնաթանի հայր ճանաչել են Հովհաննես վարդապետին, որն իբր եղել է Նաղաշի «առաջին ուսուցիչը», «բանասեր և քարտուղար», «ծաղկող վարպետ»[4]։ Շ. Նազարյանը և Ա. Մնացականյանը առարկում են Ակինյանին. «Սխալ է նրա հայր «տէր Յոհան»-ին նույնացնել այն ժամանակ ապրած շոռոթեցի «Յովհաննէս վարդապետի» հետ, որը պատկանում էր Շոռոթի ամենախոշոր խոջաներից մեկի ընտանիքին»[5]։ Խնդիրը, սակայն, մնում է բաց։

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Շոռոթում ընդօրինակված երկու ձեռագիր՝ Հայսմավուրք և Ավետարան, որոնց գրիչն ու ծաղկողն է տեր Հոհանը։

Առաջին ձեռագրում (№ 9242) կա այսպիսի հիշատակագրություն. «Բազմաբիծ և դատապարտ ոգւոյ գրողիս՝ Յոհան և եթ անուամբ քահանայի, գրեցաւ թվին ՌՃԺԲ (1663), ընտիր յօրինակէ ի գեղաքաղաքս Շոռոթ»[6]։ Ձեռագրի վերջում տեր Հոհանը թողել է ընդարձակ հիշատակարան, որի շնորհիվ ծանոթանում ենք իր կենսագրությանը. «Փառք... ետ կարողութիւն անպիտան Յոհան և եթ անուամբ քահանայիս, հասուցանէլ աւարտ զսուրբ Աւետարանս՝ գիրն, ծաղիկն, կազմն։ Գրեցի զսա յընտիր օրինակէ, որ ո՛չ գտանի և կամ երեւի այսպիսի օրինակ, զոր շնորեցաւ ինձ ի ձեռանէ Յովհաննէս վարդապե-

---

1 Ն. Ակինյան. Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք. Վիեննա, 1911, էջ 55։

2 Նույն տեղում, էջ 57։

3 Նույն տեղում, էջ 58։

4 Մ. Մկրտչյան. Նաղաշ Հովնաթան. Երևան, 1957, էջ 28։ Մ. Ղազարյան. Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում. Երևան, 1974, էջ 147։

5 Նաղաշ Հովնաթան. Բանաստեղծություններ. Երևան, 1951, էջ 1։

6 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 9242, էջ 104բ։

տին։ ...յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զգրիչ տէր Յոհաննես և զծնողսն իմ՝ զԳրիգորն և զՀօրիկն և զկողակիցն իմ՝ զՍօղովմեն և զորդիսն իմ՝ զՄարգարն և Յովնաթանն և զդստերսն իմ՝ Զառնիշանն և զՍամիրսն և զեղբարսն իմ՝ Թադէոսն և Հայկազն և զքորսն իմ՝ զԱննախաթունն, զՋինին և զՄարիամն և դուք յիշեալ լիջիք»[7]։

Այսպիսով հայտնի է դառնում, որ տեր Հոհանը քահանա էր և նրա հայրը եղել է ոչ թե տեր Վարդանը, այլ Գրիգորը[8]։ Նաև իմանում ենք, որ այդ նույն տեր Հոհանը բազմազավակ հայր է եղել. ունեցել է երկու որդի՝ Մարգարն (ավագը) և Հովնաթան անուններով։ Տեր Հոհանն ունեցել է նաև երկու դուստր, քույրեր ու եղբայրներ։ Այստեղ ուշագրավ է նաև տեր Հոհանի հիշատակությունը Հովհաննես վարդապետի մասին, որից խնդրել է ընդօրինակվող ձեռագիրը։ Կարծում ենք, այլևս առարկություն չի կարող լինել, որ տեր Հոհանը և Հովհաննես վարդապետը տարբեր անձնավորություններ են, որոնք նույն ժամանակում ապրել ու ստեղծագործել են Շոռոթում։

Տեր Հոհանի երկրորդ ձեռագիրը 1662—1663 թթ. ընդօրինակված Հայսմավուրքն է[9]։ Մատյանի բազմաթիվ էջերում նա հիշատակագրություններ է թողել, որոնցում դարձյալ տեղեկացնում է իր ծաղկող լինելու մասին և հիշատակում է հարազատների միևնույն անունները։ Այս ձեռագրերի նկարազարդման ընդհանուր պատկերը թույլ է տալիս վստահորեն ասել, որ տեր Հոհանը եղել է շնորհալի արվեստագետ։ Ավետարանում պահպանվել է միայն Հովհաննես ավետարանչի պատկերը՝ Պրոխորի հետ (նկ. 1)։ Ավետարանիչի իորհող հայացքին ուղեկցում է ձեռքերի խոսուն շարժումը։ Պրոխորը ներկայացված է որպես մի աղջնակ՝ նուրբ դիմագծերով ու երկար մազերով։ Նկարիչը նրան պատկերել է նստած դիրքով, չնայած չեն նկարված ո՛չ աթոռը և ո՛չ էլ այն բարձիկը, որի վրա սովորաբար նա նստած է լինում։ Ավետարանիչի անվանաթերթ-կիսախորանը զարդարված է հայկական ոճով։ Սկզբնատառ թուղթագրերն ունեն սահուն ու ճկուն եզրագծեր։ Ձեռագրում կան նաև տերունական նկարներ, որոնք տեղավորված են լուսանցքներում՝ Խաչելություն (էջ 32ա), Ամետում (էջ 38բ), Մկրտություն (էջ 43ա), Համբարձում (էջ 101բ)։ Հոհան նկարչի վարպետությունն առանձնապես նկատվում է Հայսմավուրքի սրբապատկերներում. որոնցում ակնհայտ է եվրոպական արվեստի ազդեցությունը։ Կերպարներն ունեն նուրբ ու վայելուչ դիմագծեր, ճկուն ու շարժուն կեցվածք, որոնք լրացված են մարմնի համաչափությունների գրագետ պահպանմամբ (նկ. 2, 3, 4)։ Պատկերների գունային ներդաշնակությունն ստեղծվել է հիմնականում կարմիրի, մանուշակագույնի ու կապույտի մեղմ համադրությամբ, որոնք տեղ-տեղ լրացվել են նարնջագույնի պայծառ շեշտումով։ Դիմանկարներում միօրինակ են աչքերի կլոր բիբերն ու նրանց մեղմ արտահայտությունը։ Ինքնատիպությամբ աչքի է ընկնում մարդկանց հագուստների ծալքամասերի գծային կատարումը։ Հայսմավուրքում առանձնապես բովանդակալից են լուսանցաղարդերը, որոնք հարուստ են իրենց թեմատիկ լուծմամբ։ Հատկապես ուշագրավ են կենդանական աշխարհի հետ կապված զարդամոտիվները. պատկերված է մայր թռչուն՝ գլխին բույն և վրան ձագեր կամ թռչուն՝ բերանին օձ, հուշկապարիկ՝ փետրվարդ գլխարկով (նկ. 5)։ Հետաքրքրական են ոճավորված գմբեթավոր տաճարներն իրենց բազմաձևությամբ (նկ. 6), բնական ծաղիկներն իրենց բազմերանգությամբ։ Հոհանի ստեղծած զարդատուները տարբեր են՝ կենդանագիր, թռչնագիր, մարդագիր, հյուսվածքագիր։ Երբեմն այս կամ այն տարի հորինվածքը կազմված է տարբեր կերպարների հյուսվածքային գեղեցիկ համադրությամբ։ Այս ամենը ստեղծվել է մանրանկարչի հմուտ ձեռքերով և վկայում է այն մասին, որ նա բավական հիմնավոր կրթություն է ստացել։

---

7 Նույն տեղում, էջ 159ա։

8 Շոռոթում այդ ժամանակ եղել է նաև Գրիգոր դրիչ, սակայն ո՛չ Հոհանի հայրը։

9 ՄՄ, ձեռ. № 7363։

Հոհանի ընդօրինակած երրորդ ձեռագրում, որ 1653 թ. Ավետարան է, նա իր հարազատների անուններից բացի հիշատակում է նաև ուսուցիչներին. «Աւարտ եղև սուրբ Աւետարանս ձեռամբ սուղ և նուաստ սուտ անուն կոչեցեալ սարկաւագ Յոհանին։ Որ և աշակերտ եղէ Մովսէս բաբունապետի, որ և կոչի անյաղթ փիլիսոփա։ Քանզի բազում աշխատութիւն արար ի վերա իմ։ Թէ գրի

Նկ. 1

և եթէ ծաղկի վարձս ի տիրոջէ առցէ։ Դարձեալ միւս վարդապետն իմ, որ կոչի Առաքել։ Նայ այլևս բազում աշխատեցաւ, որ դասատու եղև ինձ»[10]։

Մովսես Բաբունապետը, անշուշտ, Մովսես Տաթևացի կաթողիկոսն է (1628—1632 թթ.)։ Նրա գործունեության մասին հանդամանորեն գրել է

10 ՄՄ, ձեռ. № 2494, էջ 354բ։

Ն. Ակինյանը[11], նախքան կաթողիկոս դառնալը Մովսեսը Պողոս վարդապետ Մոկացու հետ 1613—1620 թթ. մեծ աշխատանք է ծավալել հատկապես Արևելյան Հայաստանում դպրոցների հաստատման ու մանուկների դաստիարակության ասպարեզում։ Այդ մասին Ակինյանը, վկայակոչելով Առաքել Դավրիժեցուն, բերում է նրա հետևյալ տողերը. «Իսկ երկոքին վարդապետքն՝ Մովսես և Պողոս եղեն իրերաց ընկերք իբրև զսուրբ առաքեալսն՝ Պետրոս եւ Պողոս, լալք ամոլք հաւատոյ՝ շրջեցան յամենայն գաւառս արեւելեայ աշ-

Նկ. 2



Նկ. 3

խարհիս, քարոզէին ամենեցուն զճշմարտութիւն, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս, հաստատէին դպրոցս, ուսուցանէին մանկունս»[12]։ Դավրիժեցու վկայությամբ նրանք դպրատուն հաստատեցին նաև Աստապատում, Շոռոթում, Ադուլիսում, որտեղ ուսանելու էին գալիս շրջակա գյուղերից։ Այդ թվականներին էլ Հոհանը աշակերտել է Մովսես վարդապետին։ Հենվելով Դավրիժեցու տեղեկության վրա, Ակինյանը ասում է, որ 1620 թ. հետո Մովսեսի համար անհնար եղավ մնալ Սյունիքում, քանի որ անվերջ հալածվում էր իր հակառակորդների և հատկապես կաթողիկոսի կողմից։ Նա հաստատվում է Երևանում, իր հետ տանելով բազմաթիվ շնորհալի աշակերտների. «Եւ բազում աշակերտօք գնացեալ յԱյրարատեանն գաւառ», որտեղ և հիմնադրում է Անանիա Անապատի դպրոցը[13]։ Մովսեսը դպրատուն է հիմնում նաև Հովանավանքում, «ուր ժողովեաց մանկունսս յոլովս և զամենեցուն զծախսն և զպէտսն ինքն հոգայր»[14]։ Իսկ Հոհանի մյուս ուսուցիչը («զարձեալ միւս վարդապետն իմ, որ կոչի Առաքել») թերևս Առաքել Դավրիժեցին է։ Հնարավոր է, որ Հոհանը աշակերտած լինի նրան Հովանավանքում կամ Էջմիածնում։

Հոհանի ընդօրինակած 1653 թ. Ավետարանում ուշադրավ են հատկապես ավետարանիչների պատկերները։ Դրանցից Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը նկարված են միևնույն հորինվածքով. նման են նաև կերպարները, որոնց մոտ նկատվող միակ տարբերությունը խորքերի գունային լուծումն է՝ կարմիր կամ կանաչ։ Հովհաննես ավետարանիչը, որը պատկերված է Պրոխորի հետ, ունի սովորական հորինվածքային լուծում։ Մանրանկարների գունային կոլորիտը հիմնականում կարմրի, դեղինի և կանաչի համադրությունն է։ Խորանների մեջ

11 Ն. Ակինյան. Մովսես Դ Տաթևացի հայոց կաթողիկոսն և իր ժամանակը. Վիեննա, 1963։

12 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ». Վաղարշապատ, 1896, էջ 291։ Ն. Ակինյան. Մովսես Դ Տաթևացի..., էջ 87, 88։

13 Ն. Ակինյան. Մովսես Դ Տաթևացի..., էջ 307։

14 Առաքել Դավրիժեցի, էջ 307։

պատկերված Եվսեբիոսի և Կարպիանոսի դիմապատկերների նմանօրինակները տեսնում ենք Հոհանի մյուս ձեռագրերում։ Ինքնատիպ են հատկապես լուսանցքների թռչնազարդերը (էջ 73ա, 126բ)։ Լուսանցքներից մեկում ներկայացված է «Քրիստոսի հարություն» պատկերը, որը դարձյալ հիշեցնում է Հայսմավուրքի միևնույն նկարը, բայց ավելի պարզունակ տեսքով։ Այս նկարներն իրենց կատարողական արվեստով դեռ չունեն այն վարպետությունը, որ

Նկ. 4



Նկ. 5

տեսնում ենք նրա հետագա՝ տասը տարի հետո կատարած աշխատանքներում։

Հովնաթանյան տոհմի երկրորդ նորահայտ մանրանկարիչն է Հոհանի ավագ որդին՝ Մարգարը։ Նրա մասին, ինչպես տեսանք, տեղեկություն կար Հոհանի 1662—1663 թթ. ընդօրինակած ձեռագրերում. «...և որդւոցս՝ Մարգարին և Յովնաթանին»։ Որոնումներից պարզվեց, որ Մարգարը նույնպես զբաղվել է գրչության արվեստով։ Մաշտոցի անվան Մատենադարանում է գտնվում 1679 թ. Շոռոթում Մարգարի ընդօրինակած ժողովածուն։ Ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք. «Գրեցաւ թվականիս ՌՃԻԸ (1679) ի գեօղաքաղաքն Շոռոթ, ձեռամբ անարհեստ և մատնագէտ միայն անւամբ դպիր Մարգարիս...»[15]։ «Արդ, աղաչեմ հանդիպողաց սուրբ գրոցս, միով հայրմեղայիւ յիշել զհանգուցեալ հայրն իմ՝ զտէր Յոհանն և Աստուած զյիշողդդ յիշէ...»[16]։ Հիշատակարանից միաժամանակ հայտնի է դառնում, որ տեր Հոհանը մահացել է ոչ թե 1682 թ., ինչպես ենթադրվել է մինչև այժմ, այլ 1679 թ.։

Ժողովածուն ունի գեղարվեստական համեստ հարդարանք. մեկ անվանաթերթ-կիսախորան, բազմաթիվ գլխազարդեր իրենց լուսանցազարդերով ու զարդագրերով։ Զարդաձևերը և նրանց ոճավորումը, ինչպես և զուսպ գունաշարը հիշեցնում են տեր Հոհանի մանրանկարները։ Միակ դիմապատկերը, որ հանդիպում է Մարգարի ձեռագրում, Քրիստոսի գծանկարն է՝ կիսախորանի կենտրոնի բաց տարածության մեջ (նկ. 7)։

Երրորդ նորահայտ ծաղկողը Նաղաշ Հովնաթանի հորեղբայրն է՝ Թադեոսը։ Ինչպես տեսանք, Հոհանը մեզ ճանաչել տվեց նաև իր եղբայրներին. «Եւ երկու եղբարքն իմ՝ զԹադէոսն և Հայկազն»։ Պարզվում է, որ Թադեոսը նույնպես զբաղվել է գրչության արվեստով։ Մատենադարանում է նրա ընդօ-

15 ՄՄ, ձեռ. № 4418, էջ 171բ։

16 Նույն տեղում, էջ 323ա։

ինակած 1667—1668 թթ. Աստվածաշունչը, որը պատվիրել է մեզ արդեն Հայոնի Հովհաննես վարդապետը. «Եւ ողորմութեանց և յիշմանց կարօտ Յովանէս վարդապետս ցանկացայ այսմ կտակարանացս և յաւաքեալ ետու ծրել



Նկ. 6

զայսոսիկ Թադէոս դպրի ի դեղաքաղաքն Շոռոթ...»[17]։ Թադեոսը ձեռագրի մի քանի էջերում թողել է նաև իր մակագրությունները. «Գրեցաւ թվին ՌՃԺԶ (1667) ամին, ձեռամբ մեղաւոր Թադէոսի»[18]։ Սակայն նա ընդօրինակել է ձե-

17 ՄՄ, ձեռ. № 3545, էջ 127ա։

18 Նույն տեղում, էջ 127ա (նաև 92բ)։

ռագրի մինչև 127բ թերթը, որից հետո շարունակել է գրիչ Ալեքսանը, իսկ Թադեոսը հավանաբար զբաղվել է ձեռագրի նկարազարդումով։ Աստվածաշնչի սակավ նկարազարդումը հար և նման է Հոհանի 1653 թ. Ավետարանի պատկերներին. միևնույն ոճով են կատարված հատկապես ոճավորված թռչնազարդերը։

Նկ. 7

Այսպիսով, հայտնի է դառնում, որ նկարիչ Հովնաթանյանների տոհմը սկսվում է ոչ թե Նաղաշ Հովնաթանով, այլ նրա նախորդներով՝ առայժմ մեզ հայտնի են նրա հոգ, հորեղբոր և ավագ եղբոր անունները, որոնց ստեղծագործությունների մանրաղնին ուսումնասիրությունը, կարծում ենք, մեծապես կօգնի Հովնաթանյան գերդաստանին վերաբերող աշխատանքների ճշգրտման ու լուսաբանման գործին։

Այժմ մի հարց. նկարիչ Հոհանը արդյոք չի՞ զբաղվել նաև որմնանկարչությամբ. հնարավոր չէ՞, որ նա մասնակցած լինի Էջմիածնի տաճարի նկա-

յապարդմանը։ Այդ հարցի պատշաճ ուսումնասիրությունը թողնելով Հովնաթանյան տոհմի արվեստով զբաղվողներին, կուզենայինք խոսք ասել որոշ հարցերի բանասիրական պարզաբանման առումով։

Էջմիածնի դանգակատան նկարազարդման (1664 թ.) հեղինակների մասին Հովհաննես Շահխաթունյանը գրում է. «Յամենեսին ի սոսա քաջապէս փայլին շնորհօք ձեռաց մեծանուն վարդապետին Լեհացւոյ և քաջ նկարչին հօր Յովնաթանու»[19]։ Կարծվել է, թե խոսքը Նաղաշ Հովնաթանի մասին է։ Գարեգին Լևոնյանն էլ այդ հայտարարությունը համարել է թյուրիմացություն, որովհետև Լեհացին ու Նաղաշը միաժամանակ չեն աշխատել ու ստեղծագործել»[20]։ Սակայն Շահխաթունյանը հազիվ թե «հայր Յովնաթանու» փոխարեն գրեր «հօր Յովնաթանու»։ Ե. Մարտիկյանը Շահխաթունյանի հիշյալ նախադասությունը մեջբերելիս «հօր Յովնաթանու» դարձվածքի փոխարեն գրում է միայն «Յովնաթանու»՝ «հօր» բառը հավանաբար ավելորդ համարելով[21]։ Մ. Ղաղարյանն աշխատում է «հօր Յովնաթանու» տվյալի տակ տեսնել Նաղաշ Հովնաթանին[22]։ Ոչ ոք չի մտածել այդ կարևոր տվյալը վերագրել Նաղաշ Հովնաթանի հորը։

Այժմ, երբ մեզ հայտնի է, որ Հովնաթանի հայրը եղել է նկարիչ և ժամանակակից Ստեփանոս Լեհացուն, ինչո՞ւ չմտածել, թե Շահխաթունյանը «հօր Յովնաթանու» ասելով, նկատի է ունեցել Հովնաթանի հորը՝ տեր Հոհանին։ Սվ բանի որ Շահխաթունյանի ժամանակի համար ճանաչված ու նշանավոր նկարիչ էր Նաղաշ Հովնաթանը, ուստի տեր Հոհանին նա ներկայացնում է Հովնաթանի անունով՝ «հօր Յովնաթանու»։ Բացի այդ, Նաղաշ Հովնաթանը հոր մահից հետո Երևան էր եկել վերանորոգելու 1679 թ. երկրաշարժից տուժած Պողոս-Պետրոս, Ս. Անանիա (Զորավոր) և Կաթողիկե եկեղեցիների որմնանկարները, որոնք Գ. Լևոնյանի կարծիքով «գրեթե միևնույն ոճի ու բնույթի որմնանկար, զարդարանքներ ու պատկերներ ունեին»[23]։ Կարելի է ենթադրել, որ տասնութամյա պատանին Երևան էր հրավիրվել հոր որմնանկարները վերանորոգելու համար։ Անհավանական չէր լինի կարծել, որ Ագուլիսի, Շոռոթի եկեղեցիների որմնանկարները կատարած լինեն տեր Հոհանը և նրա որդիները։ Այսպիսով հիմք կա պնդելու, որ ճանաչում գտած տեր Հոհանը ժամանակին հրավիրվել է Էջմիածին և մասնակցել զանգակատան նկարազարդմանը։

Ինչ վերաբերում է Ստեփանոս Լեհացուն, որը ժամանակակից էր տեր Հոհանին և համարվել է Էջմիածնի XVII դարի նշանավոր նկարիչ, ապա կարծում ենք, որ նա նկարիչ չի եղել[24]։ Այսպես մտածելու իրավունք են տալիս հետևյալ փաստերը. նա հիմնականում զբաղվել է պատմությամբ, գրականությամբ ու թարգմանություններով։ Նրա դրչագրած ձեռագրերից տեղեկանում ենք, որ դրանք նկարազարդվել են տարբեր ծաղկողների կողմից, իսկ ինքը կատարել է միայն զարդագրերը։ Լեհացու ընդօրինակած և Լվովի Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրաբերած 1661 թ. Ավետարանում նա պարզ ասում է. «...ոսկէ-նկարէնս իմն տեսակաւ զարգարել ետու գեղապաճոյճ արարեալ ի գոյնս վայելուչս երանգազան որակօք երփնազարդեալ ըստ արհեստից յորինմամբ...»[25]։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Լեհացու ընդօրի-

19 Յ. Շահխաթունեան. Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Արարատա. Վիեննա, 1911, էջ 45։

20 Գ. Լևոնյան. Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ. «Խորհրդային արվեստ», 1938, № 4, էջ 54։

21 Ե. Մարտիկյան. Հայկական կերպարվեստի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 30։

22 Մ. Ղաղարյան. Ստեփանոս Լեհացի. «Էջմիածին», 1978, № 6, էջ 52։

23 Նույն տեղում, էջ 25։

24 Այդ նույն եզրակացությանն է հանգել նաև Հայաստանի պետական պատկերասրահի աշխատակցուհի Անգին Առաքելյանը (տե՛ս Ա. Առաքելյան. Տիրամոր յոթ վերքը» կտավի հեղինակի հարցի շուրջ. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1981, № 5, էջ 89)։

25 Ղ. Ալիշան. Կամենից, տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ յաւաստնեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 193։ Նույնը՝ Մ. Ղաղարյան. Ստեփանոս Լեհացի, էջ 52։

նակած ձեռագրերից չորսը նկարազարդել է Սիմեոն բաբունին[26], երկուսը՝ այլ նկարիչներ[27]։ Իսկապես, ինչպես նկատել է Հ. Հովսեփյանը. «եթե Իլովացին նկարչությամբ զբաղված լիներ այդ ժամանակներում, կամ ուսած լիներ Իլովում յուր պատանեկության ժամանակ, անկարելի էր, որ Դավրիժեցին չհիշեր, մանավանդ լավագույն առիթն ուներ այդ մասին գրելու»[28]։ Արշակ Չոպանյանը ակնարկում է, թե Գարեգին Զարպհանալյանը Ստեփանոս Լեհացու մասին խոսելիս «անոր նկարչական ձիրքեր ալ ունենալու մասին որևէ խոսք չըսեր»[29]։ Ստեփանոս Լեհացու գրչագրած ձեռագրերից մեկում հիշատակվում է մի այլ Ստեփանոսի մասին, որը էջմիածնում եղել է վարդապետ և տնօրինել է հիշյալ ձեռագրի ստեղծման գործը. «...բայց գրեցաւ ձեռամբ Ստեփանոս քահանայի և ծաղկափթիթ տեսակօք զարդարեցաւ Ալեքսիանոսիւ և նահապետիւ արուեստաւորօք, հոգացողութեամբ և սատարութեամբ Ստեփանոս վարդապետի»[30]։ Շահխաթունյանը արդյո՞ք չի շփոթել այս երկու Ստեփանոսներին։ Հաճգակատան աշխատանքների սատարողն ու հոգացողը գուցե եղել է այս Ստեփանոս վարդապետը։

XVII—XVIII դդ. Շոռոթի ծխական դպրոցը գրչության աշքի ընկնող օջախներից մեկն էր, որտեղ ծնունդ առավ Հովնաթանյանների տոհմի նկարիչների ոչ թե հինգ, այլ վեց սերունդ։ Նրանցից շատերը նույնպես էջմիածնում ձեռագրեր նկարազարդեցին։ Նրանք, կարևոր տեղ տալով դիմանկարչության և որմնանկարչության արվեստին, այն հասցրին նոր մակարդակի և մեծ ճանաչում գտան հայ գեղանկարչության պատմության մեջ։

НОВОВЫЯВЛЕННЫЕ МИНИАТЮРИСТЫ ИЗ РОДА ОВНАТАНЯНОВ

А. Б. ГЕВОРКЯН

(Резюме)

Первым представителем династии художников Овнатанянов считался до сих пор Нагаш Овнатанян. Его отца тер-Ована многие исследователи по недоразумению отождествляли с писцом и миниатюристом вардапетом Ованнэсом, жившим в это же время в Шороте. В рукописном фонде Матенадарана нами выявлены три рукописи, написанные и украшенные рукою отца Нагаша: один Синаксарь и два Евангелия (рук. № 9242, 7363, 2494), миниатюры которых исполнены довольно умело. В памятных записях этих рукописей тер-Ован сообщает имена своих родителей, братьев, сестер, жены и детей. Выясняется, что Нагаш имел старшего брата Маргара, который также был сведущ в искусстве письма (рук. № 4418). Копированием рукописей занимался также брат тер-Ована Тадеос (рук. № 3545). Таким образом, род художников Овнатанянов начинается с отца, брата и дяди Нагаша Овнатаняна. Некоторые филологические уточнения позволяют утверждать, что тер-Ован занимался также стенной росписью. Он участвовал в украшении фресками колокольни Эчмиадзинского храма.

---

26 ՄՄ, ձեռ. №№ 2381, 1549, 2503, 1742։ Այս վերջին ձեռագրում (1646—1653 թթ.) հիշատակվում է, որ Սիմեոն բաբունու մահվան պատճառով ձեռագրի նկարազարդումը մնացել էր անավարտ։ Ավետարանը վերջնական տեսքի է բերվել Նոր Ջուղայում, ծաղկող Հայրապետի կողմից։

27 ՄՄ, ձեռ. №№ 5171, 981։

28 Գ. Հովսեփյան. Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ—ԺԸ դարերում, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության. պր. Ե, Անթիլիաս, 1951, էջ 13։

29 Ա. Չոպանյան. Նարեկ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը. Փարիզ, 1910, էջ 31։

30 ՄՄ, ձեռ. № 981, էջ 501բ։ Այս ձեռագրի մասին Մ. Ղազարյանը տեղեկացել է Մատենադարանի արխիվային ֆոնդից (Հարություն Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 13ա)։